Կարգապահական գործ թիվ ԿԳ-21013

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 292-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/174-Ա

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԿԱՐԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՒՐԳԵՆ ՌՈԴԻՍԼԱՎԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Կարեն Մեժլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Պավել Գյուլումյանի, Կարեն Սարդարյանի և Գայանե Դեմիրչյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբաններ **Կարեն Էդուարդի Քալանթարյանին (արտոնագիր՝ թիվ 909) և Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանին (արտոնագիր՝ թիվ 1026)** (**այսուհետ նաև՝ փաստաբաններ կամ Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Էնգելս Գևորգի Թումանյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների Պալատ, հայտնել է, որ 2019 թվականի նոյեմբերի 4-ին Էնգելս Գևորգի Թումանյանի և «ՔԵՅ ԸՆԴ ՋԻ ԼՈՈՒ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի միջև կնքվել է իրավաբանական (փաստաբանական) ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն փաստաբաններ Կարեն Քալանթարյանը և Գուրգեն Թորոսյանը պետք է կազմեին հայցադիմում և հանդես գային դատարանում որպես հայցվորի ներկայացուցիչ ընդդեմ Գարիկ Սարգսյանի, Վահե Սարգսյանի և Հայկ Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջով:

2019 թվականի հոկտեմբերի 4-ի իրավաբանական (փաստաբանական)

ծառայություններ մատուցելու պայմանագրով նախատեսված ծառայությունների վճարը կազմել է 3.200.000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը վճարվել է Դիմողի կողմից:

Ըստ Դիմողի Պայմանագիրը կնքելուց և գումարը վճարելուց հետո Վահե և Հայկ Սարգսյանների վերաբերյալ որևէ գործողություն փաստաբանները չեն կատարել, իսկ Գարիկ Սարգսյանի վերաբերյալ դիմում են ներկայացրել սնանկ ճանաչելու վերաբերյալ, որը մերժվել է: Դիմողը «Դատալեքս» տեղեկատվական համակարգից տեղեկացել է, որ փաստաբանները հայցադիմում են ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Գարիկ Սարգսյանին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հեռացնելու վերաբերյալ, այնուհետև հայցից հրաժարվել են և նույն պահանջով դիմել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, սակայն դա չի եղել կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան:

Դիմողը նշել է, որ այժմ Գարիկ Սարգսյանն է հայցադիմում ներկայացրել դատարան իր դեմ՝ ընկերությունից հեռացնելու վերաբերյալ, սակայն ինքը չի կարող հակընդդեմ հայց ներկայացնել, քանի որ փաստաբանների կոպիտ սխալի պատճառով զրկվել է նման հնարավորությունից:

Ըստ Դիմողի՝ փաստաբանները իրեն նաև տեղեկություններ չեն տրամադրել գործի ընթացքի մասին, խուսափել են զանգերին պատասխանելուց, իսկ այն դեպքերում, երբ ինքն է Սյունիքի մարզից գնացել փաստաբանական գրասենյակ, որպեսզի հանդիպի փաստաբանների հետ՝ վերջիններս նշել են, որ զբաղված են և հինգ րոպեից ավել չեն կարող տրամադրել և այդպես էլ որևէ տեղեկատվություն չեն տվել:

Դիմողը խնդրել է փաստաբաններին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2021 թվականի հուլիսի 7-ի թիվ 105-Ա/ԿԳ-21013 որոշմամբ փաստաբաններ **Կարեն Էդուարդի Քալանթարյանի և Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանի** նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) **2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի խախտման հատկանիշներով:**

2021 թվականի հուլիսի 22-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբաններ Կարեն Քալանթարյանի և Գուրգեն Թորոսյանի կողմից 28.06.2021 ներկայացված բացատրությամբ վերջիններս հայտնել են, որ 04.10.2019թ. Էնգելս Գևորգի Թումանյանի և «ՔԵՅ ԸՆԴ ՋԻ ԼՈՈՒ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի միջև կնքվել է իրավաբանական (փաստաբանական) ծառայություններ մատուցելու պայմանագիր, որի 1.2 կետը սահմանել է. «պայմանագրով կատարողը պարտավորվել է պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները. Պատվիրատուի անունից կազմել հայցադիմում և հանդես գալու դատարանում որպես Հայցվորի ներկայացուցիչ ընդդեմ Գարիկ Սարգսյանի, Վահե Սարգսյանի և Հայկ Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջով»:

Պայմանագիրը կնքելուց հետո փաստաբանները դիմել են ՀՀ սնանկության դատարան՝ Գարիկ Սարգսյանին, Վահե Սարգսյանին և Հայկ Սարգսյանին սնանկ ճանաչելու պահանջով:

Փաստաբանները հայտնել են, որ 2021թ. մայիս ամսին Էնգելս Թումանյանը խնդրել է իր ներկայացուցչին տրամադրել փաստաբանական վարույթում առկա փաստաթղթերի բնօրինակները և անհրաժեշտ այլ փաստաթղթերը:

Ի պատասխան վերը նշված դիմումի՝ փաստաբանական գրասենյակում Էնգելս Թումանյանի ներկայացուցչին է փոխանցվել վարույթում առկա փաստաթղթերն ամբողջությամբ:

Փաստաբանները նշել են նաև, որ մինչև Էնգելս Թումանյանի անունից դատարան դիմելը և ցանկացած այլ գործողություն կատարելը՝ նախապես հեռախոսազանգի միջոցով համաձայնեցվել են վերջինիս հետ:

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանները 2021 թվականի սեպտեմբերի 1-ին ներկայացրել են բացատրություն, որի համաձայն՝ իրենց կողմից պատվիրատուին առաջարկվել է ուղղակի գումար բռնագանձելու պահանջ ներկայացնելու փոխարեն դիմել սնանկության վարույթով՝ ՀՀ սնանկության դատարան, ինչի արդյունքում գործը՝ պատվիրատուի պահանջին համապատասխան, պետք է քննվեր Սնանկության դատարանում (ոչ Սյունիքի դատարանում), իսկ պետական տուրքի գումարը 2.300.000 ՀՀ դրամի փոխարեն կկազմեր 300.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուրի մասով՝ 100.000 ՀՀ դրամ) և դիմումի մերժման դեպքում պատվիրատուն (դիմողը) չի կրի էական վնասներ՝ հաշվի առնելով այն, որ հայցի առարկայի մեջ մտնող գումարի չափը մեծ էր (մոտ 115.000.000 /մեկ հարյուր տասնհինգ միլիոն/ ՀՀ դրամ) և պատվիրատուն չէր պատրաստվում վճարել պետական տուրքի գումարը, ինչպես նաև այն հանգամանքը, որ պատվիրատուի կողմից առկա հստակ պահանջ որպեսզի գործը չքննվեր Սյունիքի մարզի դատարանում:

Բացատրության համաձայն՝ փաստաբանները՝ նախքան ծառայությունների մատուցմանն անցնելը, պատվիրատուի հետ քննարկել են գործի փաստական

հանգամանքները, վերջինիս բացատրվել են պահանջ ներկայացնելուց հետո հնարավոր բոլոր բացասական հետևանքները՝ մասնավորապես այն, որ քննարկման առարկա կազմող գործով անցել են օրենքով սահմանված վաղեմության ժամկետները և պատասխանողի կողմից նման միջնորդության առկայության դեպքում հնարավոր է հայցային վաղեմության հիմքով հայցի /դիմումի/ մերժում, հավելելով նաև, որ օրենսդրական հնարավորություն հայցային վաղեմության կասեցման և/կամ ընդհատման հարց բարձրացնելու հնարավորություն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մինչ այդ կողմերի միջև առկա էր նախկինում որոշ նամակագրություններ պարտքի ճանաչման ընդունման և. այլնի վերաբերյալ:

Բացատրության համաձայն՝ Փաստաբանները դիմել են ՀՀ սնանկության դատարան՝ Գարիկ Սարգսյանին (գործ թիվ՝ ՍնԳ/2113/04/19), Վահե Սարգսյանին (գործ թիվ՝ ՍնԴ/2110/04/19) և Հայկ Սարգսյանին (գործ թիվ՝ ՍնԴ/2115/04/19) սնանկ ճանաչելու պահանջով, իսկ՝ հաշվի առնելով այն, որ պատվիրատուն չէր պատրաստվում վճարել պետական տուրքի գումարը, փաստաբանների կողմից ներկայացվել է նաև միջնորդություն պետական տուրքի գումարը տարաժամկետելու մասին:

Նշվածի արդյունքում, ՀՀ Սնանկության դատարանի որոշմամբ Գարիկ Սարգսյանի թիվ ՍնԳ/2113/04/19 գործով սնանկ ճանաչելու մասին պահանջը մերժվել է՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառով՝ հաշվի առնելով պարտապանի ներկայացուցչի միջնորդությունը հայցային վաղեմության բաց թողնելու վերաբերյալ, ինչպես նաև Դիմող՝ Էնգելս Թումանյանի կողմից իր շահերից չբխող տրված ցուցմունք, փաստաբաններին նախապես տրված տեղեկություններից էական տարբերվող տեղեկություններ, իսկ Վահե Սարգսյանին և Հայկ Սարգսյանին համապատասխանաբար թիվ ՍնԴ/2110/04/19 և թիվ ՍնԴ/2115/04/19 գործով մերժել պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը և վերադարձնել նշված անձանց սնանկ ճանաչելու մասին դիմումները:

Փաստաբանները նաև նշել են, որ կողմի հետ որոշվել է դիմել դատարան Գարիկ Սարգսյանին ընկերությունից հեռացնելու պահանջով, որի ընթացքում պետք է քննարկվեր հնարավոր հաշտության տարբերակներ, սակայն հայցի հարուցումից հետո, Դիմողը պարզելով, որ նշված հայցը պետք է քննվի Սյունիքի մարզի ընդանուր իրավասության դատարանում, հայտնել է իր վրդովմունքը և հայտնել, որ չի ցանկանում նշված պահանջը պնդել, որով պայմանավորված ներկայացուցիչն իրեն տրված լիազորությունների շրջանակում հրաժարվել է պահանջից:

Բացատրության համաձայն՝ 2021 թվականի մայիս ամսին Էնգելս Թումանյանը դիմելով «Քեյ ընդ ջի լոու ֆիրմ» ՍՊ ընկերություն, խնդրել է իր այլ ներկայացուցչին տրամադրել փաստաբանական վարույթում առկա փաստաթղթերի բնօրինակները և անհրաժեշտ այլ փաստաթղթերը, ինչին ի պատասխան սահմանված կարգով Էնգելս Թումանյանի ներկայացուցչին փաստաբանական գրասենյակում փոխանցվել է փաստաբանական

վարույթում առկա փաստաթղթերի բնօրինակները և պահանջված այլ փաստաթղթերի պատճեներն ամբողջությամբ:

Փաստաբանները նաև հավելել են, որ մինչ Էնգելս Թումանյանի անունից դատարան դիմելը, ինչպես նաև մինչ ցանկացած այլ գործողություն կատարելը, նախապես հեռախոսազանգի միջոցով դրանք համաձայնեցվել են Էնգելս Թումանյանի հետ, որից հետո կատարվել են համապատասխան դատավարական գործողությունը, որի վերաբերյալ գրասենյակում պահպանված են համապատասխան հեռախոսային խոսակցությունները և ձայնագրությունները:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

2021 թվականի սեպտեմբերի 6-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

2021 թվականի սեպտեմբերի 8-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2021 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Դիմող՝ Էնգելս Թումանյանի և «ՔԵՅ ԸՆԴ ԶԻ ԼՈՐԻ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Քալանթարյանի միջև 2019 թվականի հոկտեմբերի 4-ին կնքվել է պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.2 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները. պատվիրատուի անունից կազմել

հայցադիմում և հանդես գալու դատարանում, որպես հայցվորի ներկայացուցիչ, ընդդեմ Գարիկ Սարգսյանի, Վահե Սարգսյանի և Հայկ Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով:

2) Էնգելս Թումանյանի կողմից փաստաբաններին տրված լիազորագիրը, որով վեջինս լիազորել է փաստաբաններին իր անունից հանդես գալու Հայաստանի հանրապետության բոլոր դատական ատյաններում, այդ թվում՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ սնանկության, ՀՀ վարչական, վերաքննիչ վարչական դատարաններում, վճռաբեկ դատարանում, ՀՀ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններում, կատարելու դատավարական գործողություններ, պաշտպանելու իր շահերը, կատարելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսված գործողությունները:

3) 03.12.2019 թվականին Էնգելս Թումանյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանը դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան ընդդեմ Վահե Սարգսյանին վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, միաժամանակ միջնորդել է պետական տուրքի վճարումը հետաձգել և լուծել վերջնական դատական ակտով. (գործ թիվ ՍՆԴ/2110/04/19):

4) 03.12.2019 թվականին Էնգելս Թումանյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանը դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան ընդդեմ Հայկ Սարգսյանի՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, միաժամանակ միջնորդել է պետական տուրքի վճարումը հետաձգել և լուծել վերջնական դատական ակտով. (գործ թիվ ՍՆԴ/2115/04/19)

5) 03.12.2019 թվականին Էնգելս Թումանյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանը դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան ընդդեմ Գարիկ Գառնիկի Սարգսյանին՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին (գործ թիվ ՍՆԴ/2113/04/19)

6) Թիվ ՍՆԴ/2113/04/19 գորցով Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի 2019թ. դեկտեմբերի 04-ի որոշմամբ Էնգելս Գևորգի Թումանյանի դիմումը՝ Գարիկ Գառնիկի Սարգսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

7) 05.06.2020 թվականի վճռով Էնգելս Գևորգի Թումանյանի դիմումը՝ Գարիկ Գառնիկի Սարգսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին մերժվել է՝ հայցային վաղեմություլ կիրառելու հիմքով:

8) 22.07.20020 թվակաին "ԷՆԳԵԼՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ" ՍՊ ընկերության մասնակից Էնգելս Գևորգի Թումանյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանը փոստին հանձնելու միջոցով հայցադիմում է ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդեմ "ԷՆԳԵԼՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ" ՍՊ ընկերության մասնակից Գարիկ Գառնիկի Սարգսյանի ընկերության մասնակցին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հեռացնելու պահանջի մասին,

9) 16.02.2021 թվականին "ԷՆԳԵԼՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ" ՍՊ ընկերության մասնակից Էնգելս Գևորգի Թումանյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ "ԷՆԳԵԼՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ" ՍՊ ընկերության մասնակից Գարիկ Գառնիկի Սարգսյանի ընկերության մասնակցին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հեռացնելու պահանջի մասին,

10) Էնգելս Թումանյանի ներկայացուցիչ փաստաբան Գարիկ Դանիելյանի և «ՔԵՅ ԸՆԴ ՋԻ ԼՈՈՒ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կարեն Քալանթարյանի միջև կնքվել է փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ, որով փոխանցվել են փաստաբանների մոտ առկա փաստաթղթերի բնօրինակները:

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանը փաստաբան է հանդիսանում 2006 թվականի դեկտեմբերի 5-ից և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որը կարճվել է:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանի փաստաբան է հանդիսանում 2010 թվականի հոկտեմբերի 16-ից և 2019-2021թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Կարեն Էդուարդի Քալանթարյանի և Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«***Փաստաբանության մասին» օրենքի*** **(այսուհետ նաև՝ Օրենք)** ***19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝*** *Փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:.*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ նյութերի ուսումնասիրությունը, վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- ***արդյոք փաստաբաններ Գուրգեն Թորոսյանը և Կարեն Քալանթարյանը մատուցել են Պայմանագրով սահմանված ծառայությունները.***
- ***արդյոք փաստաբաններ Գուրգեն Թորոսյանը և Կարեն Քալանթարյանը տրամադրել են Դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերից և իրենց տրված հանձնառություններից.***
- ***արդյոք փաստաբաններ Գուրգեն Թորոսյանը և Կարեն Քալանթարյանը Դիմողին կանոնավորապես տեղեկացրել են հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

1) *Քննարկելով փաստաբաններ Գուրգեն Թորոսյանի և Կարեն Քալանթարյանի կողմից պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հարցն անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հանգամանքներին՝*

- Դիմող՝ Էնգելս Թումանյանի և «ՔԵՅ ԸՆԴ ԶԻ ԼՈՐԻ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կարեն Քալանթարյանի միջև 2019 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ փաստաբանները պարտավորվել են Պատվիրատուին (դիմողին) մատուցել հետևյալ ծառայությունները. ***պատվիրատուի անունից կազմել հայցադիմում և հանդես գալու դատարանում***, ***որպես հայցվորի ներկայացուցիչ***, ***ընդդեմ Գարիկ Սարգսյանի, Վահե Սարգսյանի և Հայկ Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին***, պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով:
- Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն՝ Կատարողը **իրավունք ունի ինքնուրույն որոշել ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակը՝ հաշվի առնելով**

պատվիրատուի շահը:

- 04.10.2019թ-ին տրված լիազորագրի համաձայն՝ Դիմողը լիազորել է փաստաբաններին *իր անունից հանդես գալու Հայաստանի հանրապետության բոլոր դատական ատյաններում, այդ թվում՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի,* ***ՀՀ սնանկության***, ՀՀ վարչական, վերաքննիչ վարչական դատարաններում, վճռաբեկ դատարանում, ՀՀ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններում, ***կատարելու դատավարական գործողություններ, պաշտպանելու իր շահերը***, կատարելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, մասնավորապես՝ հայցադիմումը ստորագրելու, հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու, հայցապահանջներն ամբողջովին կամ մասնակիորեն ընդունելու, հայցի առարկան ն հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոխելու, հաշտության համաձայնություն կնքելու, դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերն ստանալու, դատական ակտը բողոքարկելու, կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացնելու:

Խորհուրդն արձանագրում է, որ 04.10.2019թ-ին լիազորագրով Դիմողը Փաստաբաններին լիազորել է ի թիվս այլ լիազորությունների նաև իր անունից ներկայացնելու դիմումներ, իրականացնելու դատական ներկայացուցչություն և դատավարական այլ գործողություններ **ՀՀ սնանկության դատարան**, իսկ Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն փաստաբանները ունեցել են հնարավորություն ինքնուրույն որոշելու լիազորագրով լիազորված ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակը:

Հետևաբար, Խորհուրդը գալիս է այն հետևության, որ լիազորությունների նման ծավալի սահմանելով ըստ էության Դիմողի կողմից դիտարկվել է նաև իր իրավական շահերի պաշտպանության հնարավորությունը սնանկության դատարանի կողմից:

Ուշադրության է արժանի փաստաբանների պնդումները այն մասին, որ գործի հանգամանքները ուսումնասիրելուց հետո, պարզելով որ առկա են հայցային վաղեմություն կիրառելու առերևույթ հիմքեր, նպատակահարմար են գտել դիմել սնանկության դատարան, քանի որ տվյալ դեպքում պետական տուրքի չափը ավելի պակաս կլիներ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանները ուսումնասիրելով գործի հանգամանքները, իրականացնելով մասնագիտական գնահատում՝ նպատակահարմար են գտել Գարիկ Սարգսյանին, Վահե և Հայկ Սարգսյաններին սնանկ ճանաչելու պահանջով սնանկության դատարան համապատասխան դիմումներ ներկայանալու միջոցով իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը:

Տվյալ դեպքում, ներկայացված հանգամանքները գնահատելով արձանագրվում է, որ փաստաբանները կնքված պայմանագրի և Դիմողի կողմից տրված լիազորագրի շրջանակներում փաստացի կատարել են իրենց ստանձնած պարտականությունները:

Անդրադառնալով թիվ ՍԴ1/0318/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում փաստաբանների կողմից՝ Դիմողի անունից ներկայացված «ԷՆԳԵԼՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ» ՍՊԸ-

ի մասնակից Գարիկ Գառնիկի Սարգսյանին նշված ընկերությունից հեռացնելու պահանջի մասին հայցադիմումին, Խորհուրդն արձանագրում է, որ տվյալ դեպքում թեև այն չի հանդիսացել Պայմանագրի առարկա, սակայն փաստաբանները տվյալ գործերի շրջանակներում ներկայացնելով Դիմողի շահերը գործել են 04.10.2019թ. տրված լիազորագրի շրջանակներում՝ այն է հանձնարարության սահմաններում:

Տվյալ հանգամանքի ուսումնասիրության շրջանակներում Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի և Փաստաբանների գրավոր բացատրություններում առկա են իրարամերժ և չհիմնավորված պնդումներ: Մասնավորապես՝ Փաստաբանները պնդում են, որ Դիմողի անունից նշված հայցադիմումները ներկայացվել են վերջինիս հետ համաձայնեցված լինելու պայմաններում, Իսկ Դիմողը պնդում է, որ այն համաձայնեցված չի եղել իր հետ և Փաստաբանների գործողություններով իրեն վնաս է պատճառվել:

Կարգի 7.2.6-րդ ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Խորհուրդն արձանագրում է, որ երկու կողմերի պնդումները տվյալ փաստերի քննարկման դեպքով՝ հիմնավորված չեն: Հաստատված չէ փաստաբանների գործողություններում դիտավորությունը, ինչպես նաև Դիմողի կողմից հիմնավորված չէ այն հանգամանքը, որ վերջինիս կողմից մատնանշված ենթադրյալ վնասի և փաստաբանի գործողությունների միջև առկա են առերևույթ պատճառահետևանքային կապը:

Այսպիսով, հանգամանքների ուսումնասիրության համատեքստում Խորհուրդն արձանագրում է, որ թերևս Պայմանագրում նշված չի եղել նման հայց ներկայացնելու պարտավորություն, այնուամենայնիվ այդ հանգամանքն ինքնին չի կարող դիտարկվել որպես լիազորությունների ծավալից դուրս՝ հաշվի առնելով, որ ՍԴ1/0318/02/20 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է ՀՀ սնանկության դատարանի որոշմամբ Գարիկ Սարգսյանի թիվ ՍնԳ/2113/04/19 գործով սնանկ ճանաչելու մասին պահանջը հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառով մերժվելուց հետո, այսինքն՝ Պայմանագրի առարկայով նախատեսված պարտավորությունները Փաստաբանների կողմից փաստացի կատարված լինելու պայմաններում, ինչպես նաև այն հանգամանքը, որ փաստաբանները գործել են լիազորագրի գործողության պայմաններում և լիազորությունների շրջանակներում:

2) ***Քննարկելով փաստաբաններ Գուրգեն Թորոսյանի և Կարեն Քալանթարյանի կողմից՝ Դիմողի նպաստավոր շահերից և իրենց տրված հանձնարարություններից ելնելով Դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն ցույց տալու հարցն,*** անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ փաստաբանները՝ գործով Դիմողի ներկայացուցչությունը ստանձնելու հետո, ուսումնասիրելով գործի հանգամանքները և գնահատելով առկա ռիսկերը, Դիմողի անունից

ներկայացրել են պարտապաններին սնանկ ճանաչելու դիմումներ: Ավելին, վստահորդի (Դիմողի) իրավունքների պաշտպանության մարտավարության նշված միջոցի ընտրության պայմաններում փաստաբանները փաստացի գործել են իրենց տրված հանձնարարություններին համապատասխան՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գումարի բռնագանձման մասին հայցի առարկայի մեջ մտնող մեծ գումարի չափին համապատասխան պետական տուրքի գումարը կազմում էր մոտ 2.300.000 ՀՀ դրամ, որի փոխարեն՝ սնանկության դատարան դիմելով, այն կկազմեր 300.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուրի մասով՝ 100.000 ՀՀ դրամ), և դիմումների մերժման դեպքում պատվիրատուն (Դիմողը) չէր կրի էական վնասներ:

3) ***Քննարկելով փաստաբաններ Գուրգեն Թորոսյանի և Կարեն Քալանթարյանի կողմից Դիմողին կանոնավորապես հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու հարցն*** անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ինչպես Դիմող, այնպես էլ փաստաբանները իրենց բացատրություններով հաստատել են միմյանց միջև հեռախոսազրույցների և հանդիպումների տեղի ունենալու հանգամանքը, ինչը փաստում է, որ հիմնավոր չէ Դիմողի այն պնդումները, որ Փաստաբաններն իրեն առհասարակ չեն տեղեկացրել գործի ընթացքի վերաբերյալ:

Հարկ է նաև նշել, որ չնայած Դիմումում ու բացատրություններում որոշ հեռախոսազրույցների և հանդիպումների տեղի ունենալու վերաբերյալ Դիմողի և Փաստաբանների կողմից պնդումների վերաբերյալ հստակ ապացույց չի ներկայացվել, իսկ Դիմողը՝ տեղեկացված լինելով գործի նախապատրաստման ընթացքում լրացուցիչ բացատրություն ներկայացնելու, ինչպես նաև պատշաճ ծանուցված լինելով կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել լրացուցիչ դիրքորոշում, որը հնարավորություն կտար պարզելու և հաստատելու փաստաբանների և նրա միջև եղած հեռախոսազրույցների և հանդիպումների բովանդակությանը վերաբերող որոշ հանգամանքներ՝ Կարգի 7.2.6-րդ ենթակետի համապատասխան՝ որպես կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ կասկածներ, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողների:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանների վարքագիծը չի համարում **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին** ***ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:***

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Կարեն Էդուարդի Քալանթարյանի (արտոնագիր՝ թիվ 909) և Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանի (արտոնագիր՝ թիվ 1026) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-21013 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

12 հոկտեմբերի 2021թ.
թիվ ԿԳ/174-Ա
ք. Երևան